ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՈՐԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջորամուտ համայնք, գ. Ջորամուտ
հեռ. **093-80-21-14**

ՀՀ Լոռու մարզպետ

պ-ն Ա.Նալբանդյանին

Կից ներկայացնում եմ Ջորամուտ համայնքի ավագանու թիվ 12-Ա և 13-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

Ջորամուտ համայնքի ղեկավար Ա.Փնջոյան

Ե-45

20.05.2017թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԶՈՐԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Զորամուտ համայնք, հասցե գ.Զորամուտ

Հեռախոս՝ 093-802114

## ՈՐՈՇՈՒՄ

« 15 » մայիսի 2017թ. թիվ 12-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Զորամուտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 34--Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Զորամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Աբգարյան Կարինե | | | |
| Ալիկյան Սվետլանա | | | |
| Ավանեսյան Հայկազ | | | |
| Փնջոյան Արամայիս | | | |
| Փնջոյան Էդիկ | | | |

Համայնքի ղեկավար Ա.Փնջոյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Ձորամուտ համայնքի ավագանու
2017թ. մայիսի 15-ի թիվ 12 -Ա որոշումից

# Ց Ո Ւ Ց Ա Կ

Ձորամուտ համայնքի սոցիալական օգնություն ստացող բնակիչների

1. Սահակյան Արթուր - 50000/հիսուն հազար/ դրամ
2. Փնջոյան Սայաթ - 50000/հիսուն հազար/ դրամ

Համայնքի ղեկավար Ա.Փնջոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁՈՐԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորամուտ համայնք, հասցե գ.Ձորամուտ
Հեռախոս՝ 093-802114

## ՈՐՈՇՈՒՄ

« 15 » մայիսի 2017 թ.   թիվ 13-Ա

## ԱՐՈՏԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, համայնքում մեկ գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար արոտի տարեկան վարձավճարը սահմանել 1000/հազար/ դրամ:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Աբգարյան Կարինե | | | |
| Ալիկյան Սվետլանա | | | |
| Ավանեսյան Հայկազ | | | |
| Փնջոյան Արամայիս | | | |
| Փնջոյան Էդիկ | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Փնջոյան